

## Մամլոյ յայտարարութիւն թշնամի Իսրայէլի հետ վերաբերման շուրջ

Որոշ ժամանակ է ի վեր, կարգ մը տեղեկատուական միջոցներ և ցանցի ընկերային էջեր կը տարածայնեն առաջադրութիւններ կոչ ուղղելով Սուրիացիներուն, որպէսզի վարուին թշնամի Իսրայէլին հետ "տապալելու վարչակարգը": Ժողովրդավարական Փոփոխութեան Ուժերու Ազգային Համակարգող Մարմինը խստօրէն կը դատապարտէ այս կասկածոտ և ոչ ազգային դրութիւնները, համարելով թէ տարածայնութիւններուն նպատակն է շեղել Սուրիական յեղափոխութիւնը իր գծէն և խեղաթիւրել իր ազնիւ նպատակները, որուն համար ապստամբեցաւ ժողովուրդը բռնապետական ոճրագործ վարչակարգին դէմ: Եւ այս շրջանակին մէջ, Ազգային Համակարգող Մարմինը կը շեշտէ կրկին իր սկզբնական դիրքորոշումը թշնամի Իսրայէլէն, որ կը շարունակէ Սուրիական Կոլանին գրաւումը և կը մերժէ ճանչնալ Պաղեստինի ժողովուրդին իրաւունքները ինքնատրոշման և հաստատելու անկախ պետութիւն, ըստ միջազգային օրինականութեան բանաձեւերուն: Ինչպէս նաև, Համակարգող Մարմինը կը համարէ դաւաճան ով որ կը տարածայնէ այսպիսի առաջադրութիւններ կամ ով որ կը դաւակցի և կը վարուի որեւէ ձեւերով բռնատէր թշնամի Իսրայէլին հետ, և պէտք է դատապնդել անոր հայրենիքի դաւաճանութեան մեղադրանքով:

Տեղեկատուական գրասենեակ - Ժողովրդավարական Փոփոխութեան Ուժերու

Ազգային Համակարգող Մարմին

18/03/2014